<<26>> 08. 2023թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 143
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ՝Ա.Դավթյանս քննելով <<11> 08. 2023թ. Թիվ 143 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ 11.08.2023թ.-ին Ժամը 16:00-ի սահմաններում Արամ Սենալի Մարտիրոսյանը /ծնվ.09.12.1989թ., հաշվ. Է ԼՂՀ Մարտակերտ Մատաղիս / գտնվել է Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի՝ ծածկի տակ օգտագործել է ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է, օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արամ Սենալի Մարտիրոսյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարով՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝<< >>_____2023թ. _____

Պետ,
ոստիկանության փոխգնդապետ Ա.Դ.Դավթյան